

ԿԱՆԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ (1989թ. հունվար-նոյեմբեր)*

Իսկուիի Ավանեսյան

Բանալի բառեր՝ կանայք, իրավունքներ, բռնություններ, որոշում, պատգամավորներ, ժողովրդավարություն, բողոքներ, համակարգ, դիմուններ, ելույթներ:

Ելնելով ստեղծված բարդ իրադրությունից՝ 1989թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ ԼՂԻՄ-ում՝ խորհրդային Միության պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց «Լեռնային Ղարաբաղի Խնքնավար Մարզի Հատուկ Կառավարման Կոմիտե»՝ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Արկադի Իվանովիչ Վոլոսկու գլխավորությամբ [1]: Կենտրոնը կատարեց ոչ ստանդարտ քայլ՝ ԽՍՀՄ գլխ նախագահության որոշմամբ դադարեցվեցին ԼՂԻՄ մարզխորհրդի և մարզկոմի գործունեությունը, ինչը ԽՍՀՄ Սահմանադրության և ԽՄԿԿ կանոնադրության կրախու խախտում էր: Հատուկ Կառավարման Կոմիտեին վերապահվեցին մարզի պետական իշխանության լիազորությունները: 1989թ. հունվարի 13-ին, ԽՍՀՄ Մինհստրուների խորհուրդն ընդունեց «Աղրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ում կառավարման նոր ձև մուցնելու հետ կապված միջոցառումների մասին» որոշումը, որով ԽՍՀՄ պետպանային և ֆինանսների նախարարությանը հանձնարարվեց ԽՍՀՄ պետական բյուջեի մեջ, սկսած 1989թ., հատուկ տողով նախատեսել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ցուցանիշները[2]:

Փաստորեն, ԽՍՀՄ ղեկավարմելոր ԼՂԻՄ-ը տարածքային տեսամնկյունից ճամաչել էին որպես Աղրբեջանի մաս, իսկ կառավարման առումով մարզին տրվել էր ինքնուրույն վարչական միավորի կարգավիճակ: Նոր վարչակարգի ստեղծումը հայ ժողովրդի մեջ արցախյան խնդրի լուծման աղոտ հույս արթնացրեց: Կոմիտեն որոշակի միջոցառումներ ձեռնարկեց ԼՂԻՄ-ի, Հայաստանի և Կենտրոնի հետ տնտեսական կապեր ստեղծելու ուղղությամբ, սակայն իրավական անորոշ կարգավիճակով: Մարզային կուսակցական ու պետական մարմինների լիազորությունների կասեցումը, աշխատանքային կոլեկտիվների իրավունքների սահմանափակումը վերջնականացես խլեցին մարզի և նրա բնակչության առանց այն էլ խիստ սահմանափակ իրավունքները:

Կոմիտեն երբեք էլ լիազորված չէր բավարարելու արցախահայության պահանջը, որն էլ նպաստեց մարզում լարվածության սրմանը: Հայերի ձեռնարկումները ամեն կերպ խափանվում էին Աղրբեջանի կողմից և իրականացվող բռնություններն արցախահայությանն ստիպում էին նորանոր քայլերի գնալու: Այդ օրերին կանանց նախաձեռնությամբ մի շարք աշխատանքներ իրականացվեցին Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում, հատկապես համբարքերի նախաձեռնումը՝ ուղղված ոչ միայն Հատուկ Կառավարման Կոմիտե, այլ նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահություն և վերադաս իշխանություններ:

Արցախցիների ունահարված իրավունքները պաշտպանելու նպատակով Ստեղծակերտի կանանց խորհուրդը նամակով դիմեց Հատուկ Կառավարման Կոմիտեի նախագահ Ա. Վոլոսկուն՝ խնդրելով արգելել Աղրբեջանի հակահայկական գործունեությունը[3]: Այնուհետև 1989թ. մայիսի 19-ին տեղի ունեցավ ժողովադավագորների Մար-

* Հոդվածն ընդունվել է 18.12.2015:

Հոդվածը տպագրության է երաշխավորել պ.գ.դ., պրոֆեսոր Հ. Աբրահամյանը:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

սունու 20-րդ գումարման շրջանային խորհրդի 6-րդ նատաշրջանը, որտեղ անընդունելի համարվեց ԼՂԻՄ-ի կառավարման հասուկ ծևք: Նիստին ներկա 23 կին պատգամավորներից 3-ը՝ Անգելինա Հովսեփյանը, Անժելա Խաչատրյանը, Մելանյա Աղամյանը իրենց խոսքում կարևորեցին այն հանամանքը, որ Կոմիտեի քողի տակ Աղբեջանի ղեկավարությունը շարունակում է անպատճիճ միջամտել ինքնավար մարզի գործերին, ուղարկում նրա իրավունքներն ու շահերը: Նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես ասվում է. «Հաշվի արնելով, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից քննության չեն արնվել ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզին որոշ շումները, դիմել խորհուրդների համամիտրենական համագումարին՝ լրիվ իշխանությունը օգտագործելու, ժողովրդական պատգամավորների լեռնային Պարաբաղի մարզային խորհրդի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանների որոշումները քննարկելու և Հայկական ԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ը վերամիավորելու խնդրանքով»[4]:

Եթե շարժման առաջին ամիսներին Մոսկվայի քայլերում դեռ կարելի էր տեսմել որոշակի տրամարանություն, այն է՝ քաղաքական խնդիրը տեղափոխել սոցիալ-տնտեսական հարություն և լրացուցիչ ներդրումների խոստումներ տալ, ապա արդեն 1989թ. ԼՂ Հասուկ Կոմիտեի ստեղծումով և կարծ ժամանակ ամս նրա լուծարումով՝ կենտրոնական իշխանությունն ակնհայտորեն հեռացավ ժողովրդա-վարության՝ նոյնական կողմից պատկերացվող ուղղագիր:

Ամենուր հնչող բողոքները, դժգոհությունները՝ ուղղված Կոմիտեին, հետապնդում էր մեկ նպատակ՝ վերջ դնել առկա անօրինականություններին: Այդ նպատակով ապրիլի 28-29-ին տեղի ունեցավ Ասկերանի շրջանի Հարավ և Ալենադրուր գյուղերի հասարակության ընդհանուր ժողովները, որտեղ Անիկ Ասատրյանը, Սվետլանա Պետրոսյանը, Արտա Համբարձումյանը, Եղինարա Ավանեսյանը Հասուկ Կոմիտեի գործունեությունը համարեցին անարդյունավետ, ապելին՝ նրանց հավաստմանը այն նպաստում էր հակահայկական դրամադրությանը»[5]:

Հարկ է նկատել, որ այդ օրերին Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերում տեղի ունեցան հասարակության ընդհանուր ժողովներ, որտեղ կանայք և քննադատեցին գործող համակարգը»[6]:

Հասկանշական է, որ հայ ժողովրդի բողոքները, քննադատությունները՝ ուղղված Հասուկ Կառավարման Կոմիտեին, տեղին էին, հատկապես, որ հասուկ շրջանի պարետը բարձրողություն էր արել հայ բնակչության բախստը և բացահայտորեն համագործակցում էր աղբեջանցիների հետ: Այդ ամենը արիթ հանդիսացավ, որ մարզի աշխատավորությունը 1989թ. մայիսից գործադրու սկսի, որն էլ տևեց 4 ամիս: Գործադրության պայքարը դեկավարելու համար 1989թ. հուլիսին Ողբերս քոչարյանի գլխավորությամբ Ստեփանակերտում ստեղծվեց «Միացում» կազմակերպությունը»[7]: Սակայն այս նոր մարմինն ի գորու չէր ԼՂԻՄ ողջ տարածքում համակարգելու օրեցօր թափ առնող ազատագրական շարժումը: Ստեղծված ճգնաժամից դուրս բերելու նպատակով 1989թ. մայիսի 16-ին «Հայ կանանց միաբանությունը» ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացրեց վեց կետից բաղկացած կոնկրետ միջոցառումներ, որտեղ նոյնիսկ կառավարությունից պահանջվում էր հրաժարական տալլիք: Կանայք իրենց մտահոգությունները, բողոքները՝ կապված ստեղծված լարված իրավիճակի հետ, արտահայտեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամների հետ ունեցած հանդիպումների ժամանակ:

Ա. Վելսկու նախաձեռնությամբ 1989թ. հուլիսին Արցախ ժամանած ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը այցելեց նաև Պարմետաքումբինատ, որտեղ տեղի ունեցած հանդիպման ընթացքում ելույթով հանդես եկավ նաև ժամանակակից գալստյանը:

ՄԵՐՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Հատկանշական է, որ նման նախաձեռնությունների ժամանակ կանայք փորձում էին օգտագործել ստեղծված հնարավորությունները՝ նպատակ ունենալով ազդելու իրավիճակին: Ներկայացնելով առկա դրությունը՝ Ժ Գալստյանը հատկապես կարևորեց: «Ես եղել եմ Սոսկվա մեկնած պատվիրակությունների մեջի կազմում: Բոլոր բարձրագույն մարմինների ներկայացուցիչներն ասում էին, որ հասկանում են մեր արդար պահանջը և հիանալի գիտեն, որ Լեռնային Ղարաբաղը պատմական հայկական հող է: Նոյնիսկ ընկեր Գորբաչովը Զորի Բալայանի և Սիլվա Կապուտիկյանի հետ ունեցած գրույցի ժամանակ փայլել է պատմության իմացության գիտելիքներով, ասել. «Այս, ես գիտեմ, որ դա Արցախն է, ինձակուր հայկական հող Արցախը»: Ուրեմն ոչ որի համար դա գաղտնիք չէ: «Բայց ընկերներ, մենք ձեր հարցը լուծել ոչ մի կերպ չենք կարող, որովհետու դա կարող է նախադեպ դառնալ, դա կարող է շղթայական ռեակցիա առաջանել: Խորհրդային Սիությունում ազգային այդպիսի բազմաթիվ հարցեր կան, որա համար մենք ձեր հարցը չենք լուծի, որա համար խորհրդային ժողովրդին ձշնարտությունը ձեր մասին չենք ասի...»: Հերիք է, ընկերներ հերիք է վախեցնել մեզ անկանխատեսելի հետևանքներով... Սենք խնդրում ենք Գերազույն խորհրդին հասցնեք, որ հիմա, հանենայն դեպք առաջիկա մեկ դարում այդ երկու ժողովրդների համատեղ կյանքն անհնար է... Ես դա հենց այնպես չեմ ասում. այդ մասին ասվել է մարգիսորդի նստաշրջանի մակարդակով 1988թ. փետրվարի 20-ին: Այն, որ մեր կուսակցական մարմինները չեն կարող լինել Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմի կազմում, ասվել է համապատասխան փաստաթղթերում, համապատասխան կոնֆերանսներում: Փաստութեն անցկացված է հանրաբեկ: Ամենազիստավորն այն է, որ մեր հարցն այլևս ձգձգել չի կարելի: Չեր հարգարժան գործընկերներն ասում են՝ պետք է գնալ փոխզիջման: Հարգելի ընկերներ, ծեր հանձնաժողովս ուշացել է ուղիղ մեկ ու կես տարի: Ինչ-որ փոխզիջման մենք կարող էինք համաձայնել այն ժամանակ՝ փետրվարին, մարտին, որպեսզի հնարավորություն ունենայինք գոյատևելու մինչև այսօր, մինչև վաղը, երբ դուք վերջնականապես պետք է լուծեք մեր հարցը: Ի՞նչ փոխզիջումների մասին կարող է խոսք լինել հիմա: Սենք կենդանի օրգանիզմին հիմա հարցնում ենք՝ սիրելի բարեկամ, ո՞ւրդ կտրենք, թէ՝ ձեռքդ: Այժմ արդեն ժամանակը սեղմում է: Ես ծեզ խնդրում եմ, պետք չէ գործը հասցնել նրան, ձգձգել այնքան, որ աղբբեջանական գործոնի դեմ գործի հայկական գործոնը: Ասոված մի արասց...»[9]:

Հանձնաժողովի անդամները խոստացան նպաստել հարցի շտապ լուծմանը: Բայց և այնպես, ինչպես բազմաթիվ անզամ, այս անզամ ևս Կրեմլի դիրքորոշման մեջ ոչինչ չփոխվեց:

Հերթական բողոքը՝ ուղղված Հասովկ Կառավարման Կոմիտեին, Մարտունու շրջանից էր: Հեռագրի հեղինակները՝ Էլլա Վերոյանը, Գայլա Խաչատրյանը, Էլենորա Աղարելյանը, Ֆլորա Հարությունյանը, ներկայացնելով պարետային ժամերին կատարվող օրինախախտումները մարտունեցիների նկատմամբ, խնդրում էին Ա. Վոլսկուն նպաստել առկա իրավիճակը կարգավորմանը[10]:

ԼՂ-ում հիմնահարցի շուրջ լարվածությունը մի քանի ամսում այնքան աճեց, որ ստիպեց Արցախի հայության արտակարգ քայլի գնալու. ժողովորի բախսոր տնօրինելու նպատակով 1989թ. յգուստուի 16-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ[11]: Սա կարևոր, միաժամանակ նաև հարկադիր քայլ էր, որի նպատակն էր ներկայացուցչական մարմիններից ապօրինի գրկված արցախահայությանը վերադարձնել ընտրելու և ունենալու նրա անքակտելի իրավունքը, որը կարտահայտեր ԼՂ-ի հայության միասնական կամքը:

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

Խորհրդի մեջ ընդգրկված էին նաև Նորա Ավագինյանը (մետաքսկոմբինատից), Նախշուն Ավանեսյանը (Սոյսի կղուտնտեսության նախագահ), Միլիվա Բալայանը (Մարտունու երիտղօքումի քարտուղար), Էմիրա Վահանյանը (Սարտակերտի երիտղօքումի քարտուղար), Լյուդմիլա Գրիգորյանը (բժշկուհի), Զոյա Պետրոսյանը (Մարտակերտի թիվ 1 դպրոցի ուսուցչուհի), Գրետա Սահակյանը (մարզային կինխորհրդի նախագահ) և Լիդա Սարգսյանը (Ստեփանավերտի թիվ 8 դպրոցի ուսուցչուհի): Վերջիններիս մասնակցությամբ խորհրդի համագումարում ընդունվեց որոշում, համաձայն որի՝ մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի ու կուսակցության մարգկոմի գործունեության վերականգնումը՝ երկրամասի բարձրագույն գործադիր իշխանության լիազորությունները հանձնվեց Ազգային խորհրդին: Բացի դրանից՝ համագումարը ընդունեց հոչակագիր, որում նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղի հնքնավար Սարգի գործերին Աղրբեջանական ԽՍՀ-ի միջամտությունը գնահատվելու և որպես ագրեսիայի ակտ և կատանա համարժեք պատասխան[12]:

Փաստորեն ժողովրդամսիր իշխանությունը Աղրբեջանին պարզ դարձրեց ուժի դիրքերից արցախահայության հետ խոսելու անհեռանկարայնության մասին: Այդ ամենով հանդերձ՝ խորհրդի կազմում ընդգրկված կանայք, նիստերի ժամանակ առաջարկություններով և նախաձեռնություններով հանդես գալուց բացի, մասսայական աշխատանքներ էին տանում նաև մարզի բնակչության շրջանում:

Այնուամենայնիվ Աղրբեջանի և Մուսկվայի իշխանությունների կողմից Ազգային խորհուրդը ամօրինական համարվեց, որի հետևանքը հանդիսացավ Արցախի դեմ հայակած քաղաքականության ուժեղացումը: Նոյնիսկ 1989թ. սեպտեմբերին Ստեփանակերտում ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության գինվորները գենք գործադրեցին խաղաղ բնակչության նկատմամբ, ավելին՝ եղան զիներ և վիրավորներ: Բացի այդ գործից՝ հայկական գյուղերի վրա հարձակումներ էին գործում աղրբեջանական գինված հրոսակախմբերը: Հայ կամավորականների առաջին խնդիրն էր պաշտպանել խաղաղ բնակչությանը, իսկ կանայք, իրենց հերթին համագործակցելով հայկական ուժերի հետ, կատարում էին մի շարք առաջա-դրանքներ: Այդ օրերի մասին Վարյա Զովհիականը նշում է: «Ամենուր լուրեր էինք ստանում մարզի տարրեր տեղերում կատարվող դեպքերի մասին: Հերթական լուրը հասավ Կրկժանից, որտեղ վտանգված է խաղաղ բնակչության կյանքը և ամեն պահի հնարավոր էր հարձակում աղրբեջանցի հրոսակների կողմից: Արտակարգ դրության շրջանի պարեստ, գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆոնովի հրամանով Ներքին գործերի նախարարության գործերը փակել էին Կրկժան տանող ճանապարհը: Ստեղծված օրհասական վիճակն ստիպեց վճռական քայլի դիմելու՝ օգնության գնալու հարազատներին: Խիստ վերահսկողության պայմաններում 8-10 նոնակ անծոնանցի մեջ թաքցրած՝ մեծ դժվարությամբ անցանք երկու պահակակետ և Կրկժանի մոտ միացանք Արմենավանից օգնության եկած 15 կամավորականների: Տեղի աղրբեջանցիները ծավուվել էին, կարծելով, թե հայկական ուժեր են կուտակվում Կրկժանում, իսկ հայ բնակչությունը ոգևորված էր. կարող էին պաշտպանվել»[13]: Վ. Զովհիականի վկայությամբ շարունակվել է իր համագործակցությունը Կրկժանի հնքնապաշտպանական ուժերի հետ, որին մասնակցել է նաև համագյուղացի Թամարա Բալայանը:

1989թ. հուլիսի 21-ից Աղրբեջանի կողմից Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը ենթարկվեցին տնտեսական շրջակակման: Այդ օրերի համապատկերում առանձնացվում է շահումյանցիների քայլը՝ հուլիսի 26-ին Շահումյանի շրջանային խորհրդի նստաշրջանի որոշումը՝ շրջանը ԼՂԻՄ-ին միավորելու վերաբերյալ: Այսպիսով՝ Հյուսի-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2016

սային Արցախը, որն ընդգրկված էր ազգային ազատագրական պայքարի մեջ, առաջ քաշեց կենսական նշանակություն ունեցող հարց:

Աղրբեջանի Գերագոյն խորհուրդը թշնամանքով ընդունեց ԼՂԻՄ-ի հետ միավոր վելու մասին շահումյանցիների և գետաշենցիների որոշումը: Հյուսիսային Արցախի համար փակվեց Աղրբեջանի տարածքով ԼՂԻՄ-ին կապող միակ մայրուղին, դադարեցվեցին բոլոր կարգի մատակարարությունները, ընդհատվեցին կապի միջոցները, որն էլ ստիպեց հայերին քայլեր ձեռնարկելու պաշտպանության համար:

Դրանցից մեկը ռազմավարական կարևոր նշանակության Կարաչինար-Թալիշ ճանապարհի վերանորոգումն էր, որով ապահովվեց շրջանի ցամաքային կապը մարզի հետ: Սյուս կարևոր միջոցը ռադիոկապի ստեղծումն էր Գետաշենի և Շահումյանի ու Հայաստանի միջև: Այդ օրերին Գետաշենից արտաքին աշխարհի հետ միակ կապն ապահովում էր կապավոր, ազատամարտիկ Սվետլանա (Լենա) Ավագյանը[14]: Նա կապի միջոցով Հայաստանի դեկավարությանը հաղորդում էր Գետաշենում տիրող իրավիճակի մասին: Մինչև Գետաշենի անկումը ապահովում էր հեռախոսային կապը ու միաժամանակ մասնակցում ու կազմակերպում կանաց մասնակցությունը Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանությանը: Նա հայտնի էր «Կամա-2» նշանաբանով:

Աղրբեջանի դեկավարության հերթական քայլը լինում է նոր միջոցներ ձեռնարկել՝ խարենությամբ դատարկելու Գետաշենի ենթաշրջանը: Այդ նպատակով Գետաշեն են ժամանում խանդարի պետականությունը և քրեական հետախուզության պետերը: Անրոխը թույլ չի տալիս նրանց գյուղ մտնել: Այստեղ էին նաև կանայք, որոնց ներկայությունը սկզբում աղրբեջանցի պաշտոնյաները անլուր ընդունեցին, սակայն հանդիպելով նրանց դիմադրությանը՝ հանրությանը դիմեցին՝ «քույրեր և եղբայրներ», ինչը հիարկե չմեղմացրեց իրավիճակը: Պատվիրակները ենթարկվեցին հարձակման, ջաղովեց նրանց մեքենաները, որից հետո դիմեցին փախուստի[15]:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով ականատեսների վկայությունները, կարող ենք ասել, որ Հյուսիսային Արցախում ևս ազգային-ազատագրական պայքարի մեջ ընդգրկված կանայք թիվ չեին կազմում՝ սկսած ընդհատակյա փուլից, հատկապես ինքնապաշտպանության ժամանակ:

Մարզի հայ բնակչությունն ուժերի գերարումով փորձում էր պաշտպանել իր ֆիգիկական գոյությունը, իսկ ԽՍՀՄ կենսորոնական իշխանությունները շարունակում էին վարել հակահայկական քաղաքականություն: Դրա մասին է վկայում նոյեմբերի 28-ի որոշումը, ըստ որի Լեռնային Ղարաբաղը նորից բռնակցվեց Աղրբեջանին[16]:

Սույն որոշմամբ մարզում տնօրինելու էր հանրապետական Կազմկոմիտեն, որը պիտակում էր Աղրբեջանի կոմկուսի կենտրոնի երկրորդ քարտուղար Վ. Պոյսանիչ-կոն: Նրա արջև աղրբեջանական իշխանությունները խնդիր էին որել երկրամասում փոխել ժողովրդագրական իրավիճակը հօգուտ աղրբեջանցիների: Ելնելով դեպքերի զարգացման նման ընթացքից՝ ՀԽՍՀ Գերագոյն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989թ. դեկտեմբերի 1-ին համատեղ որոշում ընդունեցին Հայկական ԽՍՀ-ը Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին [17]: Այդ որոշումը ոչ միայն արտահայտում էր մարզի հայ բնակչության իդքերն ու ցանկությունները, այլև որոշակի ապահովում էր նրա անվտանգությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Սովետական Դարաբաղ», 1989, 15 հունվարի:
2. "Известия", 1989, 21 января.
3. ԼՂՀ պետարխիվ, ֆ. 2, գ. 1, գ. 59, թ. 12:
4. Նոյն տեղում, Մարտունու շրջանային արխիվ, ֆ. 1, գ. 1, գ. 5, թ. 5-6:
5. ԼՂՀ պետարխիվ, ֆ. 2 , գ. 1, գ. 3, թ. 22-29:
6. ՀԱԱ, ֆ.207, գ. 44, գ. 41, թ. 2-5, գ. 8, թ.110, ԼՂՀ պետարխիվ, ֆ.2, գ. 1, գ. 60, թ. 10:
7. Արքահաման Հ., Սարնտչող Արցախ 1917-2000, հատոր Գ., Եր., 2007, էջ 168:
8. ՀԱԱ, ֆ. 207, գ. 44, գ. 118, թ. 10:
9. Բարյյան Վ., Տեսադաշտ 1988-1994, Ստեփ., 2013, էջ 44-45:
10. ՀԱԱ ֆ. 2, գ.1, գ.60, թ.55:
11. «Խորհրդային Դարաբաղ», 1989, 17 օգոստոսի:
12. Նոյն տեղում:
13. Հեղինակի անձնական արխիվ, Վարյա Ջուլիակյան պատմածից: Վերջինս 1989թ. եղել է Մարզկոմի նախագահի քարտուղար:
14. Դահրամանյան Կ., Օջախի գիրք. Հորը կանչում է, գիրք Բ, Եր., 2005, էջ 538:
15. Վարդումյան Հ., Աստվածների կանչը, Եր., 2004, էջ 45:
16. «Խորհրդային Դարաբաղ», 1989, 30 հոկտեմբերի:
17. Նոյն տեղում, 3 դեկտեմբերի, 1989:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կանանց գործունեությունը հատուկ կառավարման կոմիտեի ժամանակահատվածում
(1989թ. հունվար- նոյեմբեր)
Իսկուհի Ավանեսյան

Իրադարձությունների վերլուծությունը ցույց են տալիս, որ հիշյալ շրջանում ծագված զանգվածային բռնությունների ալիքը չկարողացավ կոտրել հայ ժողովրդի համար կամքը:

Ստեղծված իրավիճակից ելնելով՝ սանձազերծված բռնությունների առթիվ բողոքի ձայն բարձրացնող կանանց հասարակական կազմակերպությունները, կին քաղաքական, հասարակական գործիչները, քննադատելով Արցախում առկա բռնարարները, կոնկրետ քայլերի դիմեցին՝ պահանջելով արդարացի լուծում տալ հիմնախնդրին: Այդ պայքարում նրանք աննահանջ էին: Չնայած հակառակորդի ճնշումներին՝ կանայք հերոսաբար դիմակայեցին նրանց բոլոր մարտահրավերներին և իրենց տեղն ու դերն ունեցան Արցախի ազգային-ազատագրական պայքարում:

РЕЗЮМЕ

Деятельность женщин в период Комитета особого управления

(январь–ноябрь 1989г.)

Искуи Аванесян

Ключевые слова: женщины, права, насилия, решение, депутаты, демократия, жалобы, система, заявки, выступления.

Анализ событий показывает, что в вышеуказанный период развернувшаяся волна массовых репрессий не смогла сломать упорную волю армянского народа.

В связи со сложившейся ситуацией женские общественные организации подняли голос протesta по случаю развязки насилия, политики, общественные деятели также раскритиковали насилие в Арцахе, предприняли конкретные шаги, требуя дать справедливое решение Карабахской проблемы. В этой борьбе они были неотступны. Несмотря на давление противника, женщины героически выстояли все их боевые вызовы и имели свое место и роль в национально-освободительной борьбе Карабахского конфликта.

SUMMARY

The women's activities during the period of Special Management Committee

(January – November, 1989)

Iskuhi Avanesyan

Keywords: women, rights, violence, decision, deputies, democracy, protest, system, appeals, speeches.

The analysis of the events shows that the massive violence could not break the will of the Armenian people. During this period women from non-governmental organizations, women-politicians and public figures criticized the violence in Artsakh and undertook concrete steps, demanding a fair solution to the Karabakh problem. They were persevere in this struggle. Despite the pressure of the enemy, women heroically withstood all their combat challenges and had their place and role in the national liberation struggle of the Karabakh conflict.